ԱՕԱ
ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆԸ,
ՈՐԸ ԵՍ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՄ...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ..... 3

Քրիստինե Անդրեասյան

ՄԵՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՆԿՅՈՒՆԸ՝
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ..... 4

Հեղինակ՝ Ելենա Թադեվոսյան

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ..... 6

Հեղինակ՝ Մերի Աբրահամյան

ԿՅԱՆՔԻ ԾԱՂԻԿ 8

Հեղինակ՝ Գայանե Դավթյան

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ
ԵՎ ԻՐ ՆԿԱՐՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ 9

Հեղինակ՝ Կարինե Թադեվոսյան

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ..... 10

Հեղինակ՝ Գայանե Հարությունյան

ԱՐՏԱՇԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 11

Հեղինակ՝ Անահիտ Բաղդասարյան

«ԹՈԽՄԱԽԻ ԳՅՈԼ»..... 12
ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 32 ՇԵՆՔ 13

Հեղինակ՝ Ռուզաննա Իսկանդարյան

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ..... 14

Հեղինակ՝ Շուշան Աթոյան

ՄԵՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ 15

Հեղինակ՝ Մարիամ Զաքարյան

ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ..... 16

Հեղինակ՝ Անի Հովհաննիսյան

ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ..... 19

Հեղինակ՝ Վարվառա Ավակիմյան

ՆԱԽԱԲԱՆ

Բարև, իմ սիրելի՛ փոքրիկ բարեկամ: Ես ցանկանում եմ քեզ հետ ընկերանալ ու քեզ հրավիրել ինձ հետ ճամփորդության: Մենք միասին կճամփորդենք քեզ ծանոթ, բայց միևնույն ժամանակ անծանոթ Երևան քաղաքում: Համոզված եմ, հիմա կասես, որ դու Երևանը ճանաչում ես և քեզ համար ձանձրալի կլինի զբոսնել ու շրջել Երևանում, սակայն հավատացնում եմ, որ այն Երևանը, որի հետ ես ուզում եմ քեզ ծանոթացնել, դու դեռ չես տեսել: Կառաջարկեմ մեր ճամփորդությանը հրավիրես նաև քեզ շրջապատող մեծահասակներին նույնպես: Կարծում եմ նրանք էլ չգիտեն այն Երևանը, որին ես եմ ցույց տալու:

Դե, ինչ, արի սկսենք մեր ճամփորդությունը և մեզ ցանկանաք հաջողություն: Հա, չմոռանամ ասել, որ հետդ վերցնես ֆոտոխցիկ որպեսզի կարողանաս նկարել այն ամենը ինչ մենք կտեսնենք:

Քրիստինե Անդրեասյան

АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ
ХАЧАТУР АБОВЯН
100 ЛЕТ СО ДНЯ СМЕРТИ
1848
1948
50
50
ПОЧТА СССР

ՄԵՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՆԿՅՈՒՆԸ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

Ելենա Թադևոսյան
Հիվանդանոցային դպրոցի հատուկ մանկավարժ

Քանաքեռի կանաչախիտ թաղամասում է գտնվում հայ ժողովրդի մեծ լուսավորիչ, դեմոկրատ, հայ նոր մանկավարժության հիմնադիր Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը:

Թանգարանը բացվեց քանաքեռցի Աբովյանների տոհմական տանը, որտեղ ծնվել էր Խաչատուր Ավե-տիքի Աբովյանը (1809-1848 թթ.): Հարթ տանիքով միահարկ տունը, բաղկացած երեք սենյակից և մեծ պատշգամբից, շուրջ 200 տարի առաջ կառուցել էր նրա պապը՝ Ապովը: 1935-ին հին տան կողքին կառուցվեց երկհարկանի հոյակերտ շինություն, որը տուն-թանգարանի վերածվեց՝ 1939 թվականին: Նրա ընդարձակ սրահներում ճաշակով ձևավորված ցուցադրությունները պատմում են լուսավորչի կյանքի և անձնվեր գործունեության մասին:

Թանգարանի առջև կանգնած է Խաչատուր Աբովյանի հուշարձան-կոթողը, որի հեղինակն է ճարտարապետ՝ Ա. Տեր-Մարուքյանը:

Աբովյանը ընդամենը 20 տարեկան էր, երբ Արարատ լեռան գագաթը բարձրանալու նպատակով էջմիածին ժամանեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը: Աբովյանը լավ գիտեր գրաբարը, տիրապետում էր ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն և քրդերեն լեզուներին և նրան հանձնվում է ուղեկցել արշավախումբը: 1829 թվականի սեպտեմբերի 27-ն բանք բարձրանում են Մեծ Մասիսի գագաթը:

Հետագայում պրոֆեսորի օգնությամբ Աբովյանը իր ուսումը շարունակում է Դորպատի համալսարանում ուր խորապես ուսումնասիրում է՝ գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն և լատիներեն լեզուները:

Ավարտելով համալսարանը Խաչատուր Աբովյանը աշխատում է Թիֆլիսի, իսկ հետո Երևանի նահանգական դպրոցներում, որպես տեսուչ, ուր կրքոտ հայրենասերն իրեն նվիրում է լուսավորչական գործի զարգացմանը: Գրեց չափածո և արձակ գործեր՝ «Պարապ վախտի դաղալիքը», «Թուրքի աղջիկը», «Ֆեոդորա» և այլ գործեր, գրեց նաև դպրոցական ձեռնարկներ: Սակայն Աբովյանի գրական ժառան- գության գլուխգործոցը, նրա թագ ու պսակը «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» պատմավեպն է, որի նյութը պարսկական բռնակալության լծի տակ հեծող հայ ժողովրդի կյանքն է:

Աբովյանը ժողովրդի առօրյա իցգրականություն մտցրեց աշխարհաբար լեզուն: Նա դրեց հայ նոր դպրոցի և մանկավարժության հիմքերը: Մեծ լուսավորչի հիշատակին երգեր, վեպեր, բանաստեղծություններ են նվիրվել, իր անունով շրջան և փողոց են անվանել և մի շարք ուսումնական հաստատություններ կրում են հայ լուսավորչի անունը:

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով սկսվեց հայերի զանգվածային արտագաղթ, և շուրջ 90 000 հայեր հարկադրված լքեցին իրենց հայրենիքը: Ժամանակի ցարական չինովնիկության հակահայկական քաղաքականությունը չէր կարող ազատամիտ Աբովյանի վրա իր բացասական ազդեցությունը չունենալ: Շատ կարևոր է, թե պատմական այդ ժամանակաշրջանում ինչպես էին ձևավորվում Աբովյանի հասարակական-քաղաքական հայացքները: Ռուսաստանի նկատմամբ խանդավառ վերաբերմունք ունեցող Աբովյանի մոտ («Օրհնվի էն սհաթը...») առաջացան գաղափարական շրջադարձի բոլոր նախադրյալները՝ ձախողվեցին դպրոց ստեղծելու իր ծրագրերը և, ընդհանրապես, չիրականացան սեփական պետականությունը վերականգնելու հայ ժողովրդի բոլոր ձգտումները: Այս ամենի արդյունքը մեծ լուսավորչի առեղծվածային անհայտացումն էր, որի ստույգ մանրամասները առ այսօր թաղված են թանձր խավարի մեջ:

Ա. Բակունցի տեսակետով, Աբովյանը գնացել է 1848 թ. Եվրոպական հեղափոխություններին մասնակցելու:

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը կարծում էր, որ նա ինքնասպանություն է գործել:

Պատմական գիտությունների թեկնածու Վ. Ավետյանը համոզում է, որ Աբովյանը սպանվել է իր պարտապան թուրքերի ձեռքով:

Այս բազմաթիվ տարբերակներից մեկն էլ Աբովյանի Սիբիր աքսորվելու վարկածն է, որը պնդում էր պատմաբան Վ. Ղազարյանը: Առկա է նաև մի փաստաթուղթ լուսավորչի աքսորված լինելու վերաբերյալ՝ հիշեցնելով, որ նման վկայություն կա նաև մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանի մոտ:

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Մերի Աբրահամյան
Հիվանդանոցային դպրոցի հատուկ մանկավարժ

Մայր Հայաստան հուշահամալիրը բացվել է 1950թ. նոյեմբերի 29-ին Հաղթանակ զբոսայգում: Հեղինակը ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն է: 1962թ. հանվել է Ի. Ստալինի արձանը: 1967թ. տեղադրվել է Հայաստանի ժողովրդական նկարիչ Արա Հարությունյանի հեղինակած 22 մետր բարձրության պղնձե կոփածո ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ արձանը: Հուշահամալիրը նախագծվել է հայկական եկեղեցու կառուցվածքով, ընդհանուր բարձրությունը 52 մետր է: 1970թ. բացվել է Հայաստանը Հայրենական մեծ պատերազմում 1941-1945թթ. թանգարանը: 1995թ. այն վերանվանվել է ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ զինվորական թանգարանի և անցել ՀՀ ՊՆ ենթակայության ներքո: Թանգարանը հիմնականում արտացոլում է 2 թեմա՝ Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային պատերազմին և Արցախյան ազատագրական պատերազմ: 1-ին հարկի ցուցադրությունը նվիրված է 2-րդ համաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը: Ներկայացված են հայկական 6 դիվիզիաների, աչքի ընկած մարտիկների գործունեությունը: Առանձին ցուցադրություններում ներկայացված են հայ մարշալների (Հ. Բաղրամյան, Ի. Իսակով, Հ. Բաբաջանյան, Ա. Խանփերյանց) և գեներալների գործունեությանը: Պատկերասրահում ներկայացված են Խորհրդային Միության հերոսների և գեներալների յուղաներկ դիմանկարները: Սև գրանիտե հուշ-դահլիճում անմահացված են Խորհրդային Միության հերոսների և Փառքի շքանշանի լրիվ ասպետների, Հայրենական մեծ պատերազմում զոհված-անհայտ կորածների անունները: 2-րդ հարկի ցուցադրությունը նվիրված է Արցախյան ազատագրական պատերազմին, ներկայացված է ՀՀ ազգային հերոսների և Արցախի հերոսների, ՀՀ ԶՈՒ զորատեսակների, տարբեր ռազմական գործողություններին մասնակցած ազատամարտիկների գործունեությունը, Արցախի հին մայրաքաղաք Շուշիի ազատագրման դիորաման: 3-րդ հարկում հանդիսությունների դահլիճն է: Թանգարանի օրգանական շարունակությունն է հարակից տարածքում գտնվող Անհայտ զինվորի գերեզմանը, Հերոսների, Մարշալ Բաղրամյանի, ռուս սահմանապահների ծառուղիները, զինատեսակների բացօթյա ցուցադրությունը:

Կյանքի Ծաղիկ

Գայանե Դավթյան
Էսթետիկ դաստիարակության սենյակի մանկավարժ

«Արաբկիր» ԲՀ-ի էսթետիկ դաստիարակության սաները 2015թ.-ի ապրիլի 17-ին այցելեցին «Արաբկիր» մանկական հիվանդանոցի նեֆրոլոգիա, ուրովիրաբուժական, սոմատիկ, ուլտրաձայնային հետազոտության բաժանմունքներում բուժվող և հետազոտվող հիվանդ երեխաներին:

Պատահական չէր հիվանդանոցի ընտրությունը և «Կյանքի ծքղիկ» խորագիրը: Հիվանդներին այցելած երեխաները վերոհիշյալ բուժհաստատության աշխատակիցների երեխաներն են: Ինչու «Կյանքի ծքղիկ». 100 անմոռուկ, որ պատրաստել էին երեխաները, խորհրդանշում էին ոչ միայն Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցը, այլև հայոց ոգու պայքարը անկոտրում կյանքը: Երբեք չհանձնվել, երբեք չնահանջել...

«Արաբկիր» ԲՀ-ի բուժանձնակազմն ամեն օր պայքարում է յուրաքանչյուր հիվանդի առողջության, երբեմն նաև կյանքի համար: Եվ այդ նույն աշխատակիցների երեխաների առաքելությունն էր հիվանդներին նվիրել «Կյանքի ծքղիկը»՝ ի նշան բոլոր հիվանդությունների դեմ պայքարի, ճիշտ այնպես, ինչպես հայ ժողովուրդը, որին ոչ մեկ և ոչինչ չկարողացավ ընկճել, հաղթել, վերացնել:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԵՎ ԻՐ ՆԿԱՐՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Կարինե Թադևոսյան
Հիվանդանոցային դպրոցի հատուկ մանկավարժ

Լույսի և արևի մայրաքաղաք՝ Երևան:

Բիբլիական Արարատ լեռան ստորոտում հպարտ և վեհորեն փռված է վարդագույն, հինավուրց և նորօրյա՝ Երևանը:

Հազարամյակների պատմություն ունի Երևանը: Այն հայոց երկրի տասներկուերորդ մայրաքաղաքն է, աշխարհի հնագույն քաղաքներից մեկը: Երևանի հնագույն պողոտաներից մեկը՝ Մաշտոցի պողոտան է: Երևանցիները սիրում են երեկոյան զբոսնել այս պողոտայի ծառաշատ մայթերով: Պողոտայի սկզբում, աջ կողմի վրա Երևան քաղաքի պատմության թանգարանն է՝ մի հարուստ մշակույթի օջախ: Պատմության թանգարանի դիմաց գտնվում է՝ նախկինում՝ «Փակ շուկան», շուկայից ոչ հեռու, հայ գեղանկարչության մեծ նահապետ Մարտիրոս Սարյանի անունը կրող փողոցն է: Մաշտոցի պողոտայի մի հատվածում, ծառ ու ծաղիկներով պսակված պուրակում կանգնեցված է մեծ արվեստագետի հուշարձանը, որի հեղինակն է Լևոն Թոքմաջյանը: Հուշարձանը կերտված է ուրալյան սպիտակ մարմարից, բարձրությունը 5 մետր է, քաշը՝60 տոննա: Չյունապիստակ հուշարձանը փառահեղ է, նստած է ինքը՝ վարպետը: Ակադեմիկոս Մարտիրոս Սարյանը ապրեց ու ստեղծագործեց մեծ կյանքով (1880-1972թթ):

Հրաշք բնության հրաշք որդին ժողովրդանվեր սխրանքի ուղի է անցել, հասել համաշխարհային փառ-քի ու ճանաչման: Հանճարեղ արվեստագետի ստեղծագործությունների թեման Հայաստան աշխարհն էր, մեր մեծ հայրենիքը, հրաշք բնությունը, սխրագործ մարդիկ…Սարյանը ստեղծեց հայրենի երկրին ու մարդուն նվիրված մի վիթխարի պատկերասրահ, Հայասանին պարգևեց մի «Հայաստան»:

Նրա հռչակը տարածվեց աշխարհի բոլոր երկներում, իսկ զարմանահրաշ կտավները ցուցադրվել են փառաբանված գրեթե բոլոր թանգարաններում: Ճշմարիտ է բնութագրել Սարյանին ֆրանսիայի մեծ զավակ Լուի Արագոնը.

«Հայաստանի լույսը հասնում է մեզ շնորհիվ Մարտիրոս Սարյանի: Լույսը երջանիկ մարդկանց, լեռների, մրգերի վրա… Սա մի գանձ է վերագտնված: Այնքան գեղեցիկ է նրա գույնը, որ դարերը մեր Սեզանի ու Մատիսի կողքին Սարյանին պիտի հատկացնեն առաջնակարգ տեղ…»

Սարյան փողոցի վրա է գտնվում Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանը, գույների մեծ վարպետի անունը կրող փողոցի համար 3 շենքում: Վարպետաց-վարպետի տուն-թանգարանը եռահարկ գողտրիկ մի շենք է, ամբողջ մի պատկերասրահ: Բնապատկերներ, դիմանկարներ, գծանկարներ և տարբեր բնույթի ու ժանրի աշխատանքներ, որոնցով հիանում է ամեն մի այցելու; Դրանք ստեղծված են ամենատարբեր ժամանակներում և հաճախ տարբեր երկրներում: Դիտելով կտավները այնպիսի զգացողություններ ես ապրում, թե գտնվում ես հենց այդ հեքիաթային կիրճում, զգում ես նրա զովը, թվում է, թե կարող ես խմել ու ծարավդ հագեցնել լեռնային գետակի սառնորակ ու անուշ ջրով, թե սրանք հենց այն ծաղիկներն են, որոնց վրայից մեղուները նեկտար են հավաքում…

Սարյանը՝ բնության հրաշք զավակը, արևի ու լույսի մեծ երգիչը ապրեց շուրջ մեկ դար, ստեղծեց անմահ գանձեր ու հանձնեց հավերժությանը:

Առնո Բաբաջանյան

22.01.1921թ.

Գայանե Հարությունյան
Հիվանդանոցային դպրոցի ձեռքի աշխատանքի ուսուցիչ

Կոմպոզիտոր, դաշնակահար: ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր, երգի նշանավոր վարպետ: Ավարտել է՝ Երևանի ստեղծագործական և Մոսկվայի դաշնամուրի կոնսերվատորիաները: Դասավանդել է Երևանի կոնսերվատորիայում: Ինը տարեկանում գրել է «Պիոներական քայլերգը», որը հրատարակվել է Ե. Չարենցի աջակցությամբ: Առնո Բաբաջանյանի ստեղծագործական հարուստ ժառանգությունը ներառում է երգեր, գործիքային կատարումներ, սիմոնիկ երաժշտություն: Նա ստեղծագործել է տարբեր ոճերով՝ դասական, պոպ, ջազ:

Բաբաջանյանի ստեղծագործական ոճը ձևավորվել է Արամ Խաչատրյանի և Սերգեյ Ռախմանինովի ազդեցությամբ:Նրա ստեղծագործական անհատականությունը դրսևորվել է դաշնամուրի և նվագախմբի համար գրված «Հերոսական Բալադում» և դաշնամուրային տրիոյում: Լայն ժողովրդականություն է վայելում «Հայկական Ռապսոդիան»:

Կոմպոզիտորը մեծ հեղինակություն է վայելել և համագործակցել է պոետ Ռոբերտ Ռոժդենստվենսկիի և երգիչ Մուսլիմ Մագոմայևի հետ (երգեր՝ «Королева красоты», «Голубая тайга», «Улыбнись», «Будь со мной», «В нежданный час», «Встреча», «Воспоминание» և այլն): Ֆենոմենալ հաջողության հասան համահեղինակներ Եվգենիյ Եվտուշենկոյի հետ գրված երգերը («Не спеши», «Чертово колесо», «Твои следы»), Անդրեյ Ոզնեսենկիյի հետ գրված «Год любви», «Москва-река», «Верни мне музыку» երգերը և Լեոնիդ Դերբենյովի հետ համատեղ գրված «Лучший город земли» երգը: «Առաջին սիրո երգը» և «Երևան»-ը համարվում են որպես հիմն հարազատ քաղաքի: Խորհրդային լավագույն ֆիլմերից շատերում հնչում են նրա հեղինակած կատարումները՝ «Առաջին սիրո երգը», «Երջանկության մեխանիկան», «Հարսնացուն հյուսիսից» և այլն: Նա գրել է տարբեր ստեղծագործություններ՝ «Էլեգիա», «Նոկտյուրն» և այլն:

Երևանում Ա. Բաբաջանյանի անունով է կոչվել հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճը, փողոց, երաժշտական ուսումարան և 2003թ.-ին կանգնեցվել է նրա հուշարձանը (քանդակագործ Դավիթ Բեջանյան):

Այդպես էլ 1983թ. նոյեմբերի 11-ին հեռացավ կյանքից երգի անզուգական վարպետը՝ դեռևս չստեղծած իր ամենասիրելի երգը: Սակայն նրա երգերը սիրեց ու երգեց ժողովուրդը. երգեց հայերեն ու ռուսերեն, Կալինինգրադից մինչև Վլադիվոստոկ, Մոսկվայից՝ Երևան: Նրա երգերը կատարեցին խորհրդային և ռուսական էստրադային երաժշտության աստղերը, ռուսական ժողովրդական երգի վարպետները, օպերային երգիչները: Իսկ «Ազգ փառապանձը» Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ հնչում է և կհնչի որպես հայ ժողովրդի հավերժության ձայն:

Երևանում ստեղծվել է «Առնո Բաբաջանյան» հիմնադրամ, իսկ նրա որդին՝ Արա Բաբաջանյանը, որը գլխավորում է հոր անունը կրող հիմնադրամը ցանկանում է բացել Առնո Բաբաջանյանի թանգարանը, որը գտնվելու է Մաշտոցի պողոտայի նրա տանը:

ԱՐՏԱՇԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Անահիտ Բաղդասարյան
Հիվանդանոցային դպրոցի հատուկ մանկավարժ

Եչրանում, Գյուլբեկյան փողոցի գողտրիկ մի անկյունի իր արվեստանոցում ապրում և արարում է մեր ժամանակի տաղանդավոր քանդակագործներից մեկը՝ Արտաշես Հովսեփյանը: Նրա քանդակներից շատերը դարձել են մայրաքաղաքի այցեքարտը, իսկ կառուցվածքային տեսակետից մի քանիսը բացարձակ նորույթ են մասնագիտական ոլորտում:





Քանդակագործ, Հայաստանի ժող. նկարիչ Արտաշես Ավագի Հովսեփյանը ծնվել է 1931թ. Սիսյանի Սառնակունք գյուղում: 1954թ. ընդունվել է Փանոս Թերլեմեզյանի անվան ուսումնարան: Երկրորդ կուրսից գործուղվել է Լենինգրադ՝ սովորելու Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության ու ճարտարապետության ինստիտուտում, որն ավարտել է 1961թ.: Նույն թվականին էլ մասնակցել է Ալ. Թամանյանի հուշարձանի համար հայտարարված մրցույթին՝ արժանանալով 1-ին և 2-րդ մրցանակներին: ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (1989թ.):

Ստեղծագործում է մոնումենտալ-դեկորատիվ և հաստոցային քանդակագործության բնագավառում:

Արտաշես Հովսեփյանը հեղինակ է 50-ից ավելի բարձրաքանդակների, բոլորաքանդակների, կիսանդրիների. Ալ. Թամանյանի արձանը (բազալտ, 1974թ., Երևան, ճարտարապետ՝ Ս. Պետրոսյան), Կ. Մարքսի կիսանդրին (բազալտ, 1962թ.), Երևանի կոնյակի գործարանի համտեսի սրահի, Ս. Սարգիս եկեղեցու, Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի բարձրաքանդակները, Արմեն Տիգրանյանի արձանը (բազալտ, 1987թ.) Երևանի օղակաձև զբոսայգում, Նիկողայոս Ադոնցի հուշարձանը (տուֆ, 1993թ., Սիսիան, ճարտարապետ՝ Ռ. Ջուլհակյան) և այլն: Ունի նաև մի քանի հարյուր գրաֆիկական աշխատանքներ:

«ԹՈԽՄԱԽԻ ԳՅՈԼ»

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի հարավային մասում գտնվում է արհեստական ջրամբար, որը ժողովրդի մեջ հայտնի է որպես « Թոխմախի գյոլ» կամ «Թոխմախ լիճ»: Լճի մակերեսը կազմում է 8 հեկտար:

Այս լիճը ունի դարերի պատմություն: Դեռ երեք հազարամյակ առաջ Արգիշտի թագավորը կառուցել է այս լիճը և կոչել «Արգիշտի ծով»: Լիճը կառուցվել է Էրեբունի բերդաքաղաքը ջրով ապահովելու համար: Ջուրը բերվել է Հրազդան գետից և մասամբ սնվել է ստորգետնյա ջրերով:

1578թ. Երևանի «Թոքմաք» կամ «Թոխմախ» մականունով Մահմադ խանը վերանորոգել է լիճը, ափին կառուցել հարդ տանիքով երկհարկանի կլոր ամառանոց և ստեղծել զբոսայգի գեղեցիկ վարդերով և արահետներով: Ավադույթի համաձայն՝ Թոքմաք խանը սիրել է Աբու-Հայաթ անունով գեղեցկուհուն, որը ինքնքսպան եղեավ: Լսելով այդ մասին Թոքմաք խանը նետվում է լիճը և խաղդվում, որից հետո լիճը կոչվել է «Թոխմախան գյոլ»:

Սովետական տարիներին 1940թ. առաջին անգամ այգին վերակառուցվել է և կոչվել «Կոմերիտմիության» այգի: Այդ ժամանակ կառուցվեցին կարուսելներ և ծաղկանոցներ: Լճակի պարագծով անցնում էին վագքի և մոտացիկլետների մրցումներ: Հանգստյան օրերին հաճախ անցկացվում էին մոդել-նավակների մրցումներ:

1975-1985թթ. լճի հատակը և եզրերը բետոնապատվել են:

Վերջին անգամ այգին վերանորոգվել է 2000թ.-ին իտալացի մասնագետների օգնությամբ և կոչվել «Վարդավառի»:

ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ

32 ՇԵՆՔ

Աբովյան փողոցը երևանցիների սիրելի փողոցներից մեկն է: Այստեղ, Աբովյան 32 հասցեում գտնվում է մի շենք, որը շատ պարզ ճարտարապետական շինություն է և ոչ մի յրանձնահատկությամբ աչքի չի ընկնում: Բայց այն պահպանվում է պետության կողմից:

Ի՞նչ պատմություն ունի այս շենքը և ինչո՞վ է այն հայտնի:

1923 թվականին խորհրդային կառավարությունը կարևորելով գիտնականների և արվեստագետների դերը, որոշեց Հայաստան հրավիրել մի շարք մասնագետների:

Այդ ժամանակ Երևանում ապրում էին մեծ քանակությամբ փախստականներ և հարց առաջացավ ժամանող մասնագետներին բնակարաններով ապահովելու մասին: Որոշում կայացվեց կառուցել 20 բնակարան ունեցող մի շենք: Շենքի նախագծումը հանձնարարվեց սկսնակ ճարտարապետ Սամվել Սաֆարյանին, որը հետագայում հայտնի դարձավ կառավարության շենքի, բժշկական համալսարանի, Բյուրականի աստղադիտարանի, Պուշկինի անվան դպրոցի և այլ շենքերի նախագծերով:

Աբովյան 32 շենքի նախագիծը միանգամայն համապատասխանում էր բոլշևիկյան գաղափարախոսությանը: Այսինքն՝ դա կոմունալ շենք էր: Բնակարաններում նախատեսված չէր խոհանոց, բնակիչների համար կար մեծ ճաշարան առաջին հարկում: Գիտնականները չ պետք է ժամանակ կորցնեին ուտելիք պատրաստելու վրա: Իդեպ այդ գաղափարը չաշխատեց: Իս որպեսզի գիտական գործիչները կարողանան ազատ շփվել միմյանց հետ, բնակարանների պատշգամբներըընդ հանուր էին:

Աբովյան 32 շենքիը պիտի լիներ առաջին շենքը Երևանում, որը պետք է ունենար վերելակներ: Վերելակները պատվիրվել էին Իտալյայում: Պատվերը հասել էր Մոսվա, բայց Լ.Բերյան վերելակները ուղարկել էր Թիֆլիս:

Շենքը կառուցվեց 1934 թ.ին «Հայ օգնության կոմիտեի» գումարներով, որը ստեղծվել էր Երևանում 1921 թվականին: Հիմնադիրների թվում էին Սարգիս Կասյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Նար-Դոսը, Հովհաննես Թումանյանը և այլ նշանավոր գործիչներ: Գումարը տրամադրել էր Պողոս Նուբարյանը՝ Նուբար Նուբարյանի որդին, որը Եգիպտոսի առաջին վարչապետն է եղել: Շենքի կառուցելուց հետո մի քանի տարի նրա ճակատային պատին կար գրություն՝ «Նուբարի տուն», հետո այն հեռացվեց:

Աբովյան 32 շենքիում ապրել են գրողներ Ս.Զորյանը, Զ Եսայանը, Վ.Թոթովենցը, Մ.Արազին: Նկարիչներ՝ Փ.Թեոլեմեզյանը, Ս.Առաքելյանը, նրա որդի Ա.Առաքելյանը, քույրեր Մարիամ և Երանուհի Ասլամազյանները: Հայաստանի գիտական վիրաբուժության հիմնադիր Համբարձում Քեցեկը: Ճարտարապետներ՝ Գևորգ Քոչարը և Միքայել Մազմանյանը, երգչուհի՝ Հայկանուշ Դանիելյանը, Լեզվաբան՝ Գրիգոր Ղափանցյանը և որիշներ: Շենքի բնակիչներին այցելության էին գալիս Եղիշե Չարենցը, Մարտիրոս Սարյանը, Պարույր Սևակը և այլոք:

Ռուզաննա Իսկանդարյան
Հիվանդանոցային դպրոցի հատուկ մանկավարժ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Շուշան Աթոյան
Հիվանդանոցային դպրոցի ձեռքի աշխատանքի ուսուցիչ

Մատենադարանի շենքը նախագծվել և կառուցվել է 1945-1957 թ.: Ճարտարապետ Մարկ Գրիգորյանի կողմից: 1959 թ-ին Մատենադարանը վերածնվում է գիտահետազոտական ինստիտուտի: Իսկ 1962թ-ին անվանակոչվում է Մեսրոպ Մաշտոցի անվամբ:

Այժմ Մատենադարանում կան ավելի քան 20300 ձեռագիր մատյաններ, միջնադարյան գիտության և մշակույթի ձեռագրեր, պատմություն, աշխարհագիտություն, բժշկություն, մաթեմաթիկա, տիեզերագիտություն, երաժշտություն և այլն: Միջնադարում Մատենադարաններ են եղել Էջմիածինում ,Հաղպտում, Տաթևում, Սանահինում, Կիլիկյայում, Վասպուրականում և այլուր, որտեղ կային հայկական գավառներ, գաղութներ և հայկական մշակույթի կենտրոններ: Շատ մատյաններ, ավետարաններ ոչնչացվել են տարբեր արշավանքների հետևանքով: Ինչպես նաև 1915թ. ցեղասպանության ժամանակ: Կտուց Անապատի կրած փսասները շատ մեծ է եղել: 500 ձեռագրից Մատենադարան է տեղափոխվել միայն 202-ը:

Մատենադարանը բացառիկ է իր ձեռագրերի հավաքածույով: Այնտեղ է ամփոփված հայ գրավոր մշակույթի պատմությունը: «Մատենադարան» բառը նշանակում է ձեռագրերի պահոց. մատյանների դարան: Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծվել է I-ին մատենադարանը այբուբենի ստեղծումից հետո V-րդ դարում: Այն կառուցվել է Վաղարշապատում:

Թորոս Ռոսլինի կենսագրությունից մեզ ոչինչ չի հասել: Բայց գիտենք որ, XIII-րդ դարի II-րդ կեսերի ականավոր վարպետ է եղել: Նրա ստորագրած յոթ ձեռագիր է պահպանվել: Որոնցից ամենահինը թվագրված է 1256թ. Զեյթունի ավետարան: Թորոս Ռոսլինի ստեղծագործությունների բարձր մակարդակը վկայում է, որ նա բացառիկ մի վարպետ է եղել: Նրա ձեռագրերի հենց առաջին էջերից մեր առջև բացվում է բարդ կերպարների մի ամբողջ աշխարհ և բարձր վարպետություն: 1286թ. Կիլիկիայում Հեթում Բ թագավորի պատվերով Ռոսլինը նկարազարդել է Ճաշոց ավետարանը: Եզակի այս ավետարանը իր 400 էջերի վրա թեմատիկ մանրանկարներից բացի ունի լուսանցազարդեր, բաժանազարդեր, զարդագրեր: Նկարիչը հատկապես մեծ ուշադրություն է դարձրել լուսանցքերում կատարվող թեմատիկ մանրանկարներին:

Մատենադարանի երկրորդ մասնաճուղը կառուցվել և շահագործման է հանձնվել 2011թ. Ճարտարապետ Արթուր Մեշչյան:

ՄԵՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

TUMO ԿԵՆՏՐՈՆ

Մարիամ Զաքարյան
Հիվանդանոցային դպրոցի հոգեբան

«Թումո»-ն գտնվում է Երևանի ամենամեծ կանաչ հողատարածքներից մեկի՝ Թումանյանի այգու շրջակայքում, որը պահպանվում ու խնամվում է «Թումո»-ի կողմից: Այգին հագեցած է սպորտի ու հանգստի համար նախատեսված տարածքներով՝ ներառյալ բասկետբոլի և ֆուտբոլի դաշտերը: «Թումո Պլազա»-ն կապում է «Թումո» կենտրոնն ու Թումանյանի այգին. այն նորարար բացօդյա տարածք է՝ կառուցված ընդարձակ եռանկյունաձև մակերեսներից, ջրային տարածքներից՝ ցայտաղբյուր, արտացոլվող ջրավազան, հարյուրավոր լուսադիոդներով հագեցած մեծ պատմական շատրվան:

«Թումո»-ն Երևանում զբաղեցնում է ավելի քան 6000 մ^2 տարածք ժամանակակից կառուցված շանքի առաջին երկու հարկերում: Այս տարածքը հատուկ նախագծվել է այնպես, որ համահունչ լինի «Թումո»-ի ուսումնական համակարգի ճկունությանն ու թափանցիկությանը:

Շենքի մյուս 4 հարկերը որպես գրասենյակային մակերեսներ տրամադրվում են տեղեկատվական տեխնոլոգիաների և մեդիա ոլորտի ընկերություններին՝ որպես հնարավոր գործընկերներ «Թումո»-ի կրթական գործունեությանը աջակցելու նպատակով: Վարձակալությունից ստացվող եկամուտը ապահովում է «Թումո» ծրագրի կայունությունը:

«Թումո» անդամների տրամադրության տակ է շուրջ 450 համակարգիչ՝ տեղակայված հատուկ ձևավորված շարժական կահույքի վրա և հագեցած արտադրական չափանիշներին համապատասխանող ծրագրաշարերով: Այս ամենին լրացնում են շուրջ 100 iPad-ներ ու այլ շարժական սարքեր, ինչպես նաև եռաչափ (3D) տպիչներ, երաժշտական ստեղնաշարեր, ֆոտո և տեսախցիկներ: «Թումո» անդամները մուտք ունեն ժամանակակից չափանիշներին համապատասխանող կինոթատրոն և հատուկ տեսախաղասենյակ՝ հագեցված բոլոր տեսակի ժամանակակից խաղային սարքերով, որտեղ նրանք մասնագիտանում են խաղերի մշակման ուղղությամբ, խաղում և վերլուծում են առաջատար տեսախաղերը:

ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Անի Հովհաննիսյան
Հիվանդանոցային դպրոցի հատուկ մանկավարժ

Բնության պահպանության թանգարանը հիմնվել է 1952թ.-ին կապույտ մզկիթի բակում: 1990-ին քանդվում է՝ մզկիթի նորոգման աշխատանքների պատճառով: 2004թ. Տիգրան Մեծ 34 հասցեում վերաբացվում է 13 տարի չգործող մշտական ցուցադրությունը:

Թանգարանի 3 սրահներում Հայաստանի աշխարհագրական ընդհանուր բնութագիրն է, ռելիեֆը, երկրապահությունը, կլիման և բնությունը: Սրահներում այցելուներին ներկայացվում է Հայաստանի բնությունն ըստ բնական գոտիների՝ կիսաանապատային, լեռնատափաստանային, լեռնամարգահետինային, անտառային: Յուրաքանչյուր գոտի յուրահատուկ է բուսական և կենդանական աշխարհով:

Կիսաանապատային գոտու հիմնական մասը Արարատյան դաշտին է բաժին ընկնում: Այս հարթավայրը ծածկված է խաղողի վազերով և մրգատու այգիներով: Այս գոտուն բնորոշ է ամենաթունավոր օձերից մեկը՝ գյուրզան, որի թույնը օգտագործում են բժշկության մեջ:

Անտառային գոտին սոճենու, տանձենու, կաղնու և այլ ծառատեսակների բնավայրի կլոր կտրվածքով է ներկայացված: Կենդանական աշխարհն այստեղ բազմազան է՝ լուսան, գորշ արջ, աքիս և անտառային կաչաղակ:

Լեռնատափաստանային գոտին հանրապետությունում ամենատարածվածն է: Տեղանքին բնորոշ թռչուններից են անգղերը, որոնց քանակը նվազում է և գրանցվում են «Կարմիր գրքում»:

Էնդեմիկ բուսատեսակների արգելավայր է համարվում լեռնամարգագետնային գոտին, որը կենդանական աշխարհով հարուստ չէ, բայց ինքնատիպ է:

4-րդ սրահի հավաքածուն թանգարանի բարերարներ թեհրանահայ Տեր և Տիկին Ահարոնյաններն են նվիրել, նրանց շնորհիվ է վերանորոգվել և կահավորվել թանգարանը: Նրանք նաև իրենց անձնական հավաքածուից են նվիրել: Կենդանիներից կարելի է եզրակացնել, որ մեր հանրապետության հարակից տարածքները բնակլիմայական նմանություններ ունեն: Շատ կենդանիներ և թռչուններ ապրում են նաև մեր երկրում, օրինակ՝ կոչան բաղը, գայլն ու արջը, սագն ու բվեճը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

06.05.15թ. - *Թեսթ՝ Բնության պահպանության թանգարանի վերաբերյալ*

07.05.15թ. - *Էքսկուրսիա դեպի բնության պահպանության թանգարան*

08.05.15թ. - *Տպավորությունների ամփոփում, քննարկում և պատի թերթի պատրաստում*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՈՐՈՇ ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՆԵՐ

Կաթնասուններ

Լայնականջ ոզնի
Հարավային պայտաքիթ
Մեհելիի պայտաքիթ
Սովորական երկարաթև չղջիկ
Կովկասյան մկնիկ
Հարավային ավազամուկ
Անդրկովկասյան գորշ արջ
Հարավռուսական խայտաքիս
Կովկասյան ջրասամույր
Առաջավորասիական ընձառյուծ
Մանուլ
Բեզուարյան այծ
Հայկական մուֆլոն

Թռչուններ

Վարդագույն հավալուսն
Գանգրափետուր հավալուսն
Մեծ ձկնկուլ
Մեծ սպիտակ տառեղ
Սովորական ֆլամինգո
Մոխրագույն բադ
Տափաստանային մկնաբազե
Եվրոպական տափաստանային արծիվ
Հարավեվրոպական բերկուտ
Սև անգղ
Կովկասյան սապսան
Կովկասյան մայրեհավ
Մոխրագույն կռունկ
Հայկական արծաթափայլ որոր
Եվրոպական սև ագռավ
Սպիտակափոր սոխակ
Ալպիական սերինոս
Սովորական սերինոս
Սովորական սպիտակապոչ առծիվ

Սողուններ

Միջերկրածովային կրիա
Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ
Խայտաբղետ մողեսիկ
Փոքրասիական մողես
Անդրկովկասյան սահնօձ
Կովկասյան կատվաօձ
Հայկական իժ

Երկկենցաղներ

Սիրիական սխտորագորտ

Ձկներ

Իշխան
Սևանի բեղլու





Վարվառա Ավակիմյան
Հոգեբան



Հավանաբար դուք արդեն եղել եք թատրոնում և զգացել եք այն հուզմունքը, որը տիրու է մարդուն, երեխային, մինչ վարագույրների բացվելը: Եվ ահա բացվեցին վարագույրները, ու ձեզ է ներկայանում մի յուրօրինակ կյանք բեմի վրա: Դե, իհարկե, դուք բոլորդ էլ ներկայացման ընթացքում ապրում եք այդ հերոսների խիզախություն, վիշտն ու ուրախությունը՝ դառնալով այդ իրադարձությունների մասնակիցներ:

Թատրոնն արվեստի առանձին տեսակ է: Այն ծնունդ է առել Հին Հունաստանում: Հին հունական թատրոնում դերասանները ներկայանում էին դիմակներով, ոտքերին էլ հագնում էին հաստ ներբաններով ոտնամաններ՝ բարձրահասակ երևալու համար: Վաղ ժամանակներում թատրոնականներկայացումներըբերքահավաքիավարտին(այգեկութ)նվիրվածտոնահանդեսներ էին: Այդ ժամանակներից թատրոնը շատ է փոփոխվել, չնայած դրան, միշտ էլ կարևոր տեղ է զբաղեցրել մարդու կյանքում: Նրա միջոցով գովերգել են ճկուն միտքը, համարձակությունը, ծաղրել են չարը, թուլությունը, ցույց են տվել մարդու բարությունը, ազնվությունը, խելքը:

Հայաստանում թատրոնը եղել է մեր թվարկությունից առաջ:

Տիգրան Մեք թագավորը (մ.թ.ա. 95-55թ.) Տիգրանակերտ քաղաքում կառուցել է թատրոն:

Արտավազդ երկրորդ թագավորը, որը նաև դրամատուրգ էր (մ.թ.ա. 53թ.) Արտաշատում բեմադրել է «Բաքոսուհիներ» ողբերգությունը:

Միջնադարյան Հայաստանում յուրօրինակ թատերական ներկայացումներ էին լարախաղացների և նրանց շարժումները զավեշտալեն կրկօրինակող ծաղրածուների ելույթները, որոնք շատ և շատ սիրում էին երեխաները:

Թատերական ներկայացումը ստեղծվում է հետևյալ կերպ. դրամատուրգը, նկատելով որևէ կարևոր բան կյանքում, ցանկանում է այդ մասին պատմել նաև ուրիշներին:

Նա գրում է պիես՝ ողբերգություն, կատագերգություն կամ դրամա:
Պիեսի գործող անձանց դերերը տրվում են թատրոնի դերասանների և սկսում են ապագա ներկայացման փորձերը:
Ռեժիսորը ղեկավարում է ներկայացումն ստեղծելու բոլոր աշխատանքները:
Նկարիչի ստեղծած նկարներով պատրաստվում են դեկորացիաները, կարվում են զգեստները:
Կոմպոզիտորը հորինում է երաժշտությունը, նվագախումբը պատրաստվում է այդ երաժշտության կատարմանը:
Լուսարարը կարգավորում է լուսավորության հարցերը:

Այս հսկայական թիմի աշխատանքի արդյունքնէ, որ մենք կարողանում ենք այդ ամբողջ բեմադրություն գնահատել:

Թատերական արվեստի տարատեսակներն են օպերան (երգային-երաժշտական նյութ), բալետը (պարային-պլաստիկ բովանդակություն), մեջախաղը (զուտ պլաստիկա), տիկնիկային թատրոնը (տիկնիկների միջնորդությամբ) և կրկեսը (պայմանական-էքսցենրիկ-«հրաշապատում»):

Տիկնիկներ՝ ունեցել են աշխարհի բոլոր ժողովուրդները՝ թե հազար, և թե տաս հազար տարի առաջ: Տիկնիկ պատրաստում էին կավից, փայտից ծղոտիկ կամ կտորներից:

Հին ժամանակներում մեծահասակներն աստվածներին պատկերող ֆիգուրներ էին պատրաստում: Բոլոր ժողովուրդներն էլ շատ աստվածներ ունեին՝ անձրևի, ջրի, պատերազմի և այլն: Այդ ֆիգուրները պատրաստվում էին տարբեր նյութերից, և ճրագի լույսի տակ ցուցադրվում ձգված պաստառի վրա: Մինչև որս էլ շատ երկրներում ցուցադրվում են այդպիսի ներկայացումներ, որոնք մասամբ ծիսակատարություններ են, մասամբ՝ տիկնիկային թատրոն:

Աստիճանաբար տիկնիկների միջոցով ավելի հաճախ սկսեցին ցուցադրվել հեքիաթներ, առակներ, զվարճալի տեսարաններ: Այդպիսի տեսարանների գլխավոր հերոսը, օրինակ Ռուսաստանում Պետրուշկան էր, Գերմանիայում՝ Հանսվուրստը, Անգլիայում՝ Փանչը, Ֆրանսիայում՝ Պոլիշինելը, իսկ Հայաստանում տարածված էր Ղարագյոզը:

Տիկնիկային թատրոններում աշխատում են իսկական դերասաններ: Տիկնիկ խաղացնելու չորս հիմական ձև կա՝ մատներով, թելերով, ձողերով և ստվերային ֆիգուրներով:

Տիկնիկը մատներով խաղացնող դերասանը կանգնում է վարագույրի հետևում ու վեր բարձրացնում ձեռը, տիկնիկը երևում է վարագույրի վերևում:

Թելերով տիկնիկը կառավարվում է վերևից դերասանը ձեռքերով պահում է 2, 3, 4 խաչաձևվող փայտիկներ, որոնց թելեր են կապված: Թելերի ծայրերը ամրացված են տիկնիկի գլխին, ուսերին, ոտքերին, ձեռքերին. դերասանը դրանք ձգելով, քայլեցնում է տիկնիկին:

Ձողերով տիկնիկը դերասանը պահում է իրենից վեր և վարագույրի հետևից նրան խաղացնում այնպես, ինչպես մատներին հագցրած տիկնիկը: Հիմական ձողը անցնում է տիկնիկի ամբողջ մարմնով, մինչև գլուխը, երկու այլ ձողեր գնում են դեպի ձեռքերը: Հանդիսատեսը սովորաբար չի տեսնում այդ ձողերը. դրանք ծածկված են լինում տիկնիկի շորերով:

Ստվերային ֆիգուրները սովորաբար ձևվում են թափանցիկ կաշվից և գույնզգույն ներկվում, այնպես, որ ստվերը երփներանգ է ստացվում:

Մեր երկրում Պետական Տիկնիկային Թատրոնը կրում է Հովհաննես Թումանյանի անունը, և այն արդեն գործում է ավելի քան 80 տարի:

Երևանի Հովհաննես Թումանյանի անվան Պետական Տիկնիկային Թատրոնը հիմնադրվել է 1935թ. հունիսի 1-ին և գործել Պատանի Հանդիսատեսի Թատրոնին կից: 1938թ.-ից թատրոնը կրել է Հ. Թումանյանի անունը: Առաջին ներկայացումն է եղել Սամուել Մարշակի «Չարաճճի Պետիկը» ներկայացումը: 1957թ. հուլիսի 27-ին Տիկնիկային թատրոնը վերաբացվում է որպես ինքնուրույն թատրոն: Գլխավոր ռեժիսոր է նշանակվում Երվանդ Մանարյանը (1957-1959թթ.): 1960թ.-ին թատրոն է գալիս ռեժիսոր Մանյա Ասլանյանը, ով 1961-1978թթ. եղել է թատրոնի գլխավոր ռեժիսորը, իսկ գլխավոր նկարիչն էր Արամայիս Սարգսյանը: Բեմադրվում են «Կարմիր գլխարկ», «ոսկե բանալին», «Թոմ Սոյերի արկածները», «Օլե-Լուկոյե», «Գառնիկ ախպեր» և շատ այլ ներկայացումներ: 1975թ.-ին թատրոնը տեղափոխվում է իր ներկայիս շենքը՝ Սայաթ-Նովա 4 հասցեում:

Բեմադրվում են «Երեք նարնջ», «Ալադինի կախարդական լամպը», «Եղեգնուհին», «Ամենից լավ տունը» (Ռ. Մարուխյան), «Ոսկե ձկնիկ», «Թզուկի երգը», «Գիտության բանալին» և այլ ներկայացումներ, որոնց մեծ մասը դեռևս խաղացանկում են:

BRAVO.am

ԵՐԵՎԱՆԸ, ՈՐԸ ԵՍ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՄ...

Հեղինակներ՝

Ելենա Թադևոսյան
Մերի Աբրահամյան
Գայանե Դավթյան
Կարինե Թադևոսյան
Գայանե Հարությունյան
Անահիտ Բաղդասարյան
Ռուզաննա Իսկանդարյան
Շուշան Աթոյան
Մարիամ Զաքարյան
Անի Հովհաննիսյան
Վարվառա Ավակիմյան

Ձևավորումը՝

Հայկ Սանամյան

© ԱՕԱ. 2015թ.

ԱՕԱ
ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Email: daa.office@gmail.com
www.daa.am

Բոլոր երևանցիներս միշտ էլ հպարտանում ենք մեր ինքնությամբ, մեր արժանիքներով, մեր նախնիների հերոսական գործերով, բայց հատկապես մեր շենշող ու գրավիչ մայրաքաղաքով, որն աշխարհով մեկ սփռված բոլոր հայերի տուն կանչող լույսի փարոսն է, նրանց սպեղանին:

Բոլորս էլ շատ լավ ենք ճանաչում Երևանի յուրաքանչյուր անկյուն, յուրաքանչյուր ծառ ու թուփ, սակայն այս փոքրիկ գրքույկը ևս մեկ էջ բացեց երևանցիներիս համար՝ իրազեկելով անուններ, որոնք զուցե ինչ-ինչ պատճառներով դուրս էին մնացել մեր ուշադրությունից:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր մտահոգ են, ովքեր ապրում և ինչու չէ արարում են մեր ազգի, մեր հայրենիքի և մեր վարդագույն Երևանի համար:

Եվ, ինչ խոսք, ևս մեկ անգամ ավելացավ մեր սերը համայն հայության մայրաքաղաք մեր սիրելի ալեհեր, բայց միշտ երիտասարդ Երևանի հանդեպ:

Լիանա Մարտիրոսյան

2015